ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

(առարկա)

ԹԵՄԱ՝ -ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԵՐԻՆ

Կազմեց՝ Մանուկյան Ժանետ Ազատի

(ազգանուն,անուն, հայրանուն)

Ագարակի միջնակարգ դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Նունե Ջավադյան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

ԿԱՊԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..3
ԳԼՈՒԽ 1.<< ՕՏԱՐ ԼԵԶՈՒ>> ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ……..4

1.1 <<Օտար լեզու>> ուսումնական առարկայի կրթական նշանակություն…… 4

1.2. Օտար լեզուների ուսուցման առանձնահատկություններն ու հիմնական սկզբունքները.....6
1.3. Օտար լեզուների ուսուցման հիմնական սկզբունքները……..7

ԳԼՈՒԽ 2 ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ……..
.....…10
2.1 Օտար լեզվով ուսուցանման նպատակահարմարությունը……10

2.2. Մայրենի և օտար լեզուների տեղի և դերի գիտակցումը……13

ԳԼՈՒԽ 3. ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՏԱՐՐ…15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակաշրջանում հասարակության առաջընթացին զուգահեռ աճում է կրթության դերը: Կրթությունը համապատասխանաբար կարիք ունի անընդհատ բարեփոխումների և վերակառուցման: Հանրապետության նոր կրթակարգը, նպատակ ունենալով բարելավել կրթության որակը և համապատասխանեցնել այն միջազգային չափանիշներին, սահմանում է սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների այն ծավալն ու արժեքների համակարգը, որ պետք է ձևավորվի հանրակրթական դպրոցում: Այս համակարգում իր ուրույն տեղն է զբաղեցնում օտար լեզուների ուսուցումը: Օտար լեզուն ճանաչողության, շփման և հաղորդակցման, ինչպես նաև տարբեր մշակույթների փոխճանաչման կարևորագույն միջոցն է: Լեզուն, լինելով յուրաքանչյուր ժողովրդի մշակույթի անբաժան տարրը, դրա ձևավորողն ու արտահայտությունն լավագույն միջոցը, միևնույն ժամանակ տվյալ մշակույթը մյուս ժողովուրդներին փոխանցելու ամենակարևոր միջոցն է: Հենց այս հանգամանքն էլ ապահովում է ուսումնասիրվող թեմայի **արդիականությունը**: Լեզուն նպաստում է աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, ժողովուրդների փոխըմբռնմանը և միջմշակութային հաղորդակցման ամրապնդմանն ու փոխհարստացմանը: Օտար լեզուն նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Այս չափ արժևորելով օրար լեզվի դերը բազմակողմանի զարգացած և միջազգային հանրությունը ինտեգրման պատրաստ անհատի դաստիրակման գործում, հանրակրթությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում օտար լեզուների դասավանդմանը դրվածքին և դրանց բովանդակությանը:

Հետազոտության նպատակը օտար լեզվի դասերին արժեքային համակարգի ուսումնասիրությունն ու վերլուծությունն է: Սույն հետազոտության առաջադրված նպատակին հասնելու համար առանձնացրել ենք հետևյալ խնդիրներ.

- ուսուցման սկզբունքների վերլուծությունը;
- օտար լեզվի ուսումնասիրության հետ կապված խնդիրների վերհանումը;
- որակյալ կրթությանն ուղղված մոտեցումների առաջքաշումը:

Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1.<< ՕՏԱՐ ԼԵԶՈՒ>> ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

1.1 <<Օտար լեզու>> ուսումնական առարկայի կրթական նշանակություն

Այսօր լեզուների ուսուցման բնագավառում հատկապես կարևորվում է բազմալեզու կրթությունը մշակույթների երկխոսության համատեքստում: Մի քանի օտար լեզուների իմացությունը, այսինքն՝ բազմալեզվությունը, հասարակության համար ապահովում է արագ ինտեգրում համաշխարհային հանրության քաղաքական,տնտեսական, մշակութային և կրթական տարածքում, իսկ անհատի բազմալեզվությունը հնարավորություն է տալիս անհատին ապահովելու արագ և արդյունավետ ինտեգրում հասարակության մեջ, ծանոթանալու համաշխարհային գիտական, հասարակական, տնտեսական, մշակութային տեղեկատվությանը,ինչպես նաև մեծացնում է ազատ տեղաշարժման իրավունքից օգտվելու գործնական հնարավորությունները:

Լեզվակրթության նպատակը մի կողմից գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումն է, մյուս կողմից՝ յուրաքանչյուր նոր լեզվի ուսումնառության արդյունքում լեզվական փորձի ընդլայնումն ու հարստացումը:[1]

Օտար լեզուների ուսուցման գլխավոր առանձնահատկությունը խոսքային գործունեության բոլոր տեսակների ավելի սերտ փոխկապակցված ուսուցումն է, հատկապես ունկնդրման և գրավոր խոսքի դերի բարձրացումը՝ որպես ուսուցման նպատակ և միջոց:

Այսօր խիստ կարևորվում է լայն իմաստով ինտեգրումը գիտելիքների ամենատարբեր, ինչպես հումանիտար,այնպես էլ բնագիտական ոլորտների ուսումնական առարկաների միջև, քանի որ լեզուն՝ որպես հաղորդակցության միջոց, ոչ միայն հնարավորություն է ընձեռում ձեռք բերել ամենատարբեր բնագավառներից տեղեկատվություն և գիտելիքներ, այլ նաև նպաստում է սովորողների տրամաբանական, վերլուծական մտածողության զարգացմանը, ծանոթացնում է ճանաչողության համապատասխան մեթոդներին:

Լեզուն, լինելով իր լեզվակիր ժողովրդի մշակույթի էական տարրը և այլ ժողովուրդներին այդ մշակույթ փոխանցելու միջոց, նպաստում է աշխարհի

[1] Օտար լեզուները Հայաստանում, գիտամեթոդական հանդես 4-5, 2009, էջ 8:

ամբողջական պատկերի ձևավորմանը, ժողովուրդների փոխըմբռմանը և միջմշակութային դրական հարաբերությունների ամրապնդմանն ու փոխհարստացմանը: Օտար լեզուներին տիրապետելը բարձրացնում է դպրոցականների հումանիտար կրթության մակարդակը, նպաստում է անհատականության ձևավորմանն ու սոցիալացմանը բազմամշակութային ու բազմալեզու աշխարհի հարափոխ պայմաններում: Բացի այդ, օտար լեզուներն ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում են հաղորդակցական և հանրամշակութային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանն ու

գիտակցմանը՝ բանասիրական իրազեկության ընդլայնման առումով, ինչպես նաև աջակցում են սովորողի ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը:Հենց սրանում է դրսևորվում դպրոցականների լեզվաբանական կրթության հիմունքների ձևավորմանը:

Օտար լեզվի տիրապետումը նպաստում է նաև այլ առարկաներից, օրինակ՝ աշխարհագրությունից, պատմությունից, գրականությունից սովորողների կոնկրետ պատկերացումների հարստացմանը:[2]

Այլ լեզուների իմացությունն ընձեռում է նաև տեղեկատվության գոյություն ունեցող անսպառ աղբյուրներից օգտվելու լայն հնարավորություններ (մասնագիտական և տեղեկատվական գրականություն, ինտերնետ և այլն):

Օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը, խթանում է այս կամ այն խոսքային գործունեությունը, համագործակցությունը: Այն նպաստում է նաև անձնավորության արժեքային <<կողմնորոշիչների>>, հայացքների և համոզմունքների ձևավորմանը, ծառայում է մարդկանց վարքի և փոխհարաբերությունների, խոսքային կարողությունների զարգացմանը, ինչը դրսևորում է խոսքային էթիկայի նորմերի պահպանման միջոցով:

Այսպիսով՝ օտար լեզուն՝ որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Սովորելով օտար լեզու՝ դպրոցականները նախնական պատկերացումներ են ձեռք բերում տվյալ լեզվի մասին, ըմբռնում որոշ առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է մայրենի լեզվից, ինչը նպաստում է սովորողների ինչպես բանասիրական մտահորիզոնների ընդլայմանը, այնպես էլ մայրենի լեզուն ավելի լավ հասկանալուն:

[2] Օտար լեզուները Հայաստանում, գիտամեթոդական հանդես 4-5, 2009, էջ 9

1.2. Օտար լեզուների ուսուցման առանձնահատկություններն ու հիմնական սկզբունքները

Ժամանակակից լեզվական կրթության և օտար լեզուների ուսուցման առանձնահատկություններն են.

Միջմշակութայնություն. օտար լեզուն լեզվակի ժողովրդի մշակույթի էական տարրն է, ուստի դրա ուսումնասիրությունը նպաստում է ժողովուրդների փոխըմբռմանը, միջմշակութային դրական հարաբերությունների ամրապնդմանն ու փոխհարստացմանը: Դպրոցականների հաղորդակցական և հանրամշակութային իրազեկության զարգացումը հնարավորություն է տալիս նրանց իրավահավասր գործընկեր լինել օտար լեզվով միջմշակութային հաղորդակցության գործընթացում:[3]

Միջառարկայականություն.օտար լեզվով խոսքի բովանդակությունը կարող է պարունակել տվյալներ գիտելիքների ամենատարբեր բնագավառներից (գրականություն, արվեստ, պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա և այլն), ինչն առավելագույնս մեծացնում է օտար լեզուների իմացության արժեքը՝որպես տեղեկատվության ստացման, փոխանակման ու հաղորդակցության միջոց:

Միջառարկայական ինտեգրում.օտար լեզվի և մյուս առարկաների ինտեգրումը և միջառարկայական կապերը նպաստում են երեխաների կողմից աշխարհի ու երևույթների միասնական,ամբողջական ընկալմանը, տարբեր բնագավառներից գիտելիքների, փաստերի ու գաղափարների համադրմանը, իմաստավորմանն ու գնահատմանը, ինչը խթանիչ գործոն է սովորողների ճանաչողական, ստեղծագործական գործունեության համար:

Բազմամակարդակություն. մի կողմից լեզվական տարբեր միջոցների տիրապետման անհրաժեշտություն,մյուս կողմից հաղորդակցական կարողությունների(ունկնդրել, խոսել, կարդալ և գրել) ձևավորում, ավելին՝ օտար լեզվի օգտագործումով որևէ հանրօգուտ գործունեության ծավալում (օրինակ՝ նախագծային աշխատանք, համայնքային ծառայություն կամ ծառայության միջոցով ուսումնառություն):

Բազմագործառություն. կարող է հանդես գալ և՛ որպես ուսուցման նպատակ, և՛ որպես

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 10

միջոց՝ գիտելիքների տարբեր բնագավառներից տեղեկություններ քաղելու համար:

1.3 Օտար լեզուների ուսուցման հիմնական սկզբունքները

Օտար լեզուների ուսուցման հիմնական սկզբունքներն են .

1.Օտար լեզվի միջոցով սովորողների ուսուցումը, դաստիարակությունը և զարգացումը պեղք է ընթանան անձնակենտրոն, գործունեության վրա հիմնված, հաղորդակցական-ճանաչողական մոտեցումների իրագործմամբ:

Մանկավարժական գործընթացի կենտրոնում աշակերտն է՝ իր հնարավորություն- ներով, պահանջմունքներով, տարիքային և անհատական առանձնահատկություններով, ձեռքբերումներով ու դժվարություններով, որոնք պետք է գիտակցի ուսուցիչը՝ դրսևորելով հանդուրժողական վերաբերմունք սովորողների նկատմամբ:Ուսանելով օտար լեզուներ՝ աշակերտները ձեռք են բերում այդ լեզվով շփման և հաղորդակցման կարողություն, որը ձևավորվում ուսուցչի, մյուս աշակերտների և այլ անձանց հետ ակտիվ փոխներգործուն (ինտերակտիվ) համագործակցության ընթացքում:[4]

2.Հանրակրթական դպրոցում օտար լեզվի ուսուցումը պետք է հիմնված լինի լայն հանրամշակութային համատեքստի վրա, ինչպես նաև ուղղված լինի ուսուցման հաղորդակցման նպատակի իրագործմանը: Այդ նպատակն ապահովում է իրական գործնական արդյունք, այն է՝ օտար լեզվով հաղորդակցության հիմքերի ստեղծում, անձի հոգևոր և մտավոր զարգացում: Օտար լեզուների ուսումնասիրության արդյունքում սովորողների գիտակցության մեջ տեղի ունեցող տարբեր լեզվական համակարգերի փոխներգործության և համեմատության հիման վրա ձևավորվում և զարգանում են ընդհանուր խոսքային կարողությունները, լեզվամտածողությունը և, ընդհանուր առմամբ, բարեկիրթ շփման կարողությունները:

Ուսումնադաստիրակչական ամբողջ գործընթացը օտար լեզուների ուսուցման պարագայում ուղղված է հաղորդակցական իրազեկության ձևավորմանը, որը դիտարկվում է որպես օտար լեզուների ուսուցման /ուսումնառության գլխավոր նպատակ և իրականացվում է հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում (տարրական, միջին,ավագ):

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 11:

3.Խոսքային գործունեության բոլոր ձևերը փոխկապակցված, փոխպայմանավորված են, ուստի դրանց ուսուցումը պետք է իրականացվի փոխադարձ կապի մեջ. մի կողմից՝ համաձայնեցված, մյուս կողմից՝ տարբերակված մոտեցում ցուցաբերելով դրանցից յուրաքանչյուրի ձևավորմանը: Նման մոտեցումն ապահովվում է նրանով, որ այն, ինչը սկզբում յուրացվում է բանավոր, այնուհետև ամրապնդվում է գրելու և կարդալու միջոցով:

Տարբերակված մոտեցումն իր դրսևորումն է գտնում վերարտադրողական և ընկալողական յուրացման համար նյութի ընտրության, ուսումնական տարբեր խնդիրների առաջադրման, ղոսքային գործունեության յուրաքանչյուր տեսակի համար տարբեր հնարների կիրառման, յուրաքանչյուրի համար նախատեսված որոշակի առաջադրանքների, ինչպես նաև սովորողների գիտելիքների ու կարողությունների մակարդակ հաշվի առնող մոտեցման մեջ:

4.Լեզվական և խոսքային նյութի ընտրությունն ու կազմակերպումը, ինչպես նաև կարողությունների ու հմտությունների ձևավորումը պետք է իրականցվի<<կառուցվածքային-գործառութային>> մոտեցման և մոդոլավորման հիման վրա (34): Ելնելով խոսողի նպատակից (ինչ-որ բան հարցնել, հաղորդել, խնդրել,անվանել

առարկան,նրա որակը կամ գործողությունը և այլն), որը պայմանավորված է հաղորդակցական խնդրի բնույթով, ինչպես նաև հենվելով այս կամ այն տիպի նախադասության էական կառուցվածքային ցուցանիշների վրա՝ աշակերտները սովորում են ճիշտ կառուցել նախադասությունները:

5.ՈՒսուցիչ-աշակերտ համագործակցության և ուսումնադաստիրակչական գործընթացի կառավարման ողջ համակարգը պետք է ապահովվի ուսումնական առաջադրանքներով և ռազմավարություններով:

ՈՒսուցչի և աշակերտի փոխներգործությունը ըստ էության ապահովվում է վարժությունների և առաջադրանքների միջոցով: Խոսքային գործունեության յուրաքանչյուր ձևին պետք է համապատասխանեն յուրահատուկ առաջադրանքներ և վարժություններ:Բոլոր առաջադրանքների համար ընդհանուր է այն, որ դրանք պետք է հնարավորինս մեծ հաղորդակցական ուղղվածություն ունենան:

6.ՈՒսումնական գործընթացի կազմակերպումը պետք է ապահովի ուսունառության դրդապատճառների ձևավորումը: Հայտնի է, որ ուսումնական դրական դրդապատճառները մեծապես խթանում են սովորողի հետաքրքրությունների, լեզվամտածողության, ինչպես նաև ճանաչողական և ստեղծագործական կարողությունների զարգացումը,ինչպես նաև նպաստում են ուսուցման արդյունավետության բարձրացմանը:Դրան հնարավոր է հասնել անհատական

մոտեցմամբ, ֆրոնտալ, զույգերով և խմբային աշխատանքների,ինչպես նաև խաղային մեթոդների համակցմամբ:Այս պարագայում հատուկ նշանակություն են ստանում նախագծային մեթոդի,տեսալսողական միջոցների, պրոբլեմային ուսուցման տարրերի կիրառումը:Դրանց շնորհիվ հնարավոր է հաղթահարել դպրոցական պայմաններում լեզվական բնական մթնոլորտային բացակայության դժվարությունները:

7.Տեքստերը պետք է հագեցված լինեն սովորողների մակարդակին ու հետաքրքրություններն համապատասխան երկրագիտական, հանրամշակութային տեղեկություններով:

Ինչպես նշեցինք,արգացում ահաղորդակցական իրազեկությունը ենթադրում է ոչ միայն լեզվական միջոցների յուրացում, այլ նաև դպրոցականների հաղորդակցում լեզվակիր ժողովրդի մշակույթին:Այս տեսանկյունից հատկապես կարևորվում են իրական բնագիր նյութերի ստեղծումն ու օգտագործումը:

Վերը նշված սկզբունքների վրա հիմնված ուսուցման և ուսումնառության մեթոդական համակարգը սովորողներին հնարավորություն է ընձեռում հաղորդակից դառնալու ազգային ու համամարդկային արժեքներին,նպաստում է սովորողի ուսումնառությանը, դաստիրակությունը,նրա ստեղծագործական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

ԳԼՈՒԽ 2. ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Օտար լեզվով ուսուցանման նպատակահարմարությունը

Անցումը դեպի հետարդյունաբերական, տեղեկատվական, ինտեգրանցված հասարակության պահանջում է անհատի բազմակողմանի, ամբողջական զարգացում՝ ներառյալ հաղորդակցական ընդունակությունները, որոնք դյուրացնում են նրա մուտքը համաշխարհային հանրություն և արդյունավետ գործելու հնարավորություն են ընձեռում:

Հասարակության հումանացման և ժողովրդավարացման սկզբունքներին համապատասխան հռչակվել է կրթության նոր՝ անձնակենտրոն հարացույց, որը որպես կրթության հիմնական նպատակ է դիտարկում ազատ, կրթված ու զարգացած անձի ձևավորումը, որն ունակ է ապրել ու ստեղծագործել հարափոփոխ աշխարհի պայմաններում:

Ուսումնական առարկայի հիմնական խնդիրն իր մարմնավորումն է գտնում ուսուցման հաղորդակցական նպատակում, որը ենթադրում է սովորեցնել հաղորդակցվել օտար լեզվով: Ինչպես նշվում է << Միջնակարգ կրթության պետական չափորոշչում >>,

<< օտար լեզուն ոչ հայախոս անձանց հետ շփվելու հիմնական, այլ երկրների ու ժողովուրդների քաղաքակրթությանն ու մշակույթին հաղորդակցվելու, դրանց լավագույն արժեքները յուրացնելու և հայերենով արտահայտելու, ինչպես նաև հայալեզու մշակույթը այլ ժողովուրդներին մատչելի դարձնելու լրացուցիչ միջոց է >>:

Նշելով, որ օտար լեզուների իմացությունը նպաստում է անձի հաղորդակցական կարողությունների զարգացմանը, միջմշակութային փոխըմբռմանը, այլ մշակույթների ու արժեքների ընկալմանն ու գնահատմանը, բնությանն ու ժամանակակից աշխարհի մասին առավել ամբողջական գիտելիքներ ստանալուն, գեղագիտական, բարոյական, սոցիալական, համամարդկային և ազգայիմ արժեքների գիտակցմանը, պահպանմանը և փոխանցմանը, միջնակարգ կրթության պետական չափորոշիչ սահմանում է հանրակրթական դպրոցում օտար լեզուների ուսուցման հիմնական նպատակը, այն է՝ ընդլայնել սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները:

Հանրակրթական դպրոցների սովորողներին ներկայացվող պահանջները համապատասխանում են ժամանակակից եռաստիճան դպրոցին (տարրական, միջին, ավագ) և արտացոլում են գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման երեք մակարդակները: Չափորոշիչներում և ծրագրում ներկայացվում են նաև արժեքային համակարգի ձևավորմանը ներկայացվող պահանջները

1.Գիտելիքներ. յուրաքանչյուր սովորողի համար պարտադիր գիտելիքների ցանկը.

2.Կարողություններ և հմտություններ. լեզվական կարողությունների և հմտությունների տիրապետումը.

-կարողանալ ձեռք բերված գիտելիքները կիրառել գործնականում ՝ առօրյա կյանքում,

-ընդհանուր և հատուկ ուսումնական կարողություններ, որոնք հնարավորություն են տալիս կատարելագործել օտար լեզվի տիրապետման ուղղությամբ տարվող աշխատանքները,

-փոխհատուցման կարողություններ,որոնք օտարալեզու տեղեկատվության ստանալու և հաղորդելու ժամանակ գիտելիքների և միջոցների սղության պայմաններում թույլ են տալիս ելք գտնել դրությունից, ձևափոխել ավելի պարզ բառերով ու նախադասություններով:

3.Արժեքային համակարգ

Այսօր օտար լեզուների դասավանդման ժամանակակից տեսության ու պրակտիկայի առջև հետևյալ խնդրիրներն են դրված.

- սովորողների հոգևոր ոլորտի զարգացում,
- ուսուցման հումանիտար բովանդակության գերակայդասդություն

ուսումնական առարկայի դաստիրակչական ներուժի առավել ամբողջական իրագործում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի անհատականությունն ու ներուժը:

Այսօր խոսում են օտար լեզուների ուսուցման ընդլայնված,ինտեգրացված նպատակների մասին, որը դիտարկվում է ոչ միայն հաղորդակցական այլև հաղորդակցական-ճանաչողական տեսանկյունից:

Նոր ուսումնական չափորոշիչներն ու ծրագրերը նպատակաուղղված են օտար լեզուների ուսուցման՝ անձնակենտրոն, հաղորդակցական-ճանաչողական, հանրամշակութաբանական և գործունեության վրա հիմնված մոտեցումների իրականացմանը:

Օտար լեզուների դասավանդման ժամանակակից տեսության ու պրակտիկայի առջև հետևյալ խնդիրներն են դրված.

-սովորողների հոգևոր ոլորտի զարգացում,

-ուսուցման հումանիտար բովանդակության գերակայություն,

-ուսումնական առարկայիդաստիարակչական ներուժի առավել ամբողջական իրագործում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի անհատականության ու ներուժը: Այսօր խոսում են օտար լեզուների ուսուցման ընդլայնված, ինտեգրացված նպատակների մասին, որը դիտարկվում է ոչ միայն հաղորդակցական, այլև հաղորդակցական- ճանաչողական տեսանկյունից:

Նոր ուսումնական չափորոշիչներն ու ծրագրերը նպատակաուղղված են օտար լեզուների ուսուցման՝ անձնակենտրոն, հաղորդակցական-ճանաչողական, հանրամշակութաբանական և գործունեության վրա հիմնված մոտեցումների իրականացմանը:

Օտար լեզուների ուսուցման նպատակները պետք է ապահովեն բանավոր և գրավոր հաղորդակցումը, այսինքն՝ ունկնդրելը, խոսելը, կարդալը և գրելը, ինչպես նաև լեզվական միջնորդությունը,այսինքն՝ թարգմանությունը:

Դպրոցականներին սովորեցնելով կարդալ, ունկնդրել, խոսել և գրել օտար լեզուներով, թարգմանել մի լեզվից մյուսը՝ մենք հարթում ենք նրանց ճանապարհ դեպի այլ ազգային մշակույթներ և դրանց միջոցով դեպի համաշխարհային մշակույթ, հնարավորություն ենք ընձեռում հաղորդակցվելու այլ ազգերի հետ՝ միավորելու համար ջանքերը՝ հանուն երկրի վրա խաղաղություն և կյանքի պահպանման:

2.2 Մայրենի և օտար լեզուների տեղի և դերի գիտակցումը

Որպես օտար լեզուների ուսուցման միասնական նպատակ դիտարկվում է օտար լեզվով հաղորդացական կարողությունների / իրազեկության ձևավորումը, այն է՝ օտար լեզվով հաղորդակցվելու ընդունակությունները, ինչպես նաև տվյալ լեզուն կրողների հետ փոխընբռնման հասնելու պատրաստակամությունը:

Այդ հաղորդակցումն իրականում է, ինչպես նշում է Ի.Լ.Բիմը, հետևյալ գործառույթների ամբողջությամբ.

- **իմացական-ճանաչողական**. հաղորդում, տեղեկությունների հարցում, դրանց ձեռքբերում ունկնդրման և ընթերցանության ընթացքում.
- **կանոնակարգող**. խնդրանքի, խորհրդի ձևակերպում, խոսքային և ոչ խոսքային գործողությունների խթանում.
- **արժեքային-կողմնորոշող.** կարծիքի և գնահատականի արտահայտում, հայացքների և համոզմունքների ձևավորում, փաստարկում.
- **արժեքային կարգավորող**. բարեկիրթ խոսքի կանոնների պահպանում, որ յուրաքանչյուր ժողովրդի մոտ իր առանձնահատկություններն ունի:

Համալիր հաղորդակցական նպատակները կողմնորոշված են ոչ միայն ուսուցման գործնական նպատակի ձեռքբերմանը, այլ նաև նրա կրթական, դաստիրակչական և զարգացող կողմերի ձևավորման:

Անձնակենտրոն մոտեցումը, որ ուսումնադաստիրակչական գործընթացի կենտրոնում դնում է աշակերտի անհատականությունը, նրա տարիքային առանձնահատկությունների, հնարավորությունների և հակումների հաշվառումը, ենթադրում է շեշտը դնել օտարալեզու **հաղորդակցական իրազեկության** զարգացման վրա:

Սա պետք է ապահովի նաև ուսուցման մշակութաբանական ուղղվածությունը, դպրոցականների կողմից լեզվակիր երկրի մշակույթի հետ առնչվելը, որը հանգեցնում է նաև սեփական երկրի ու մշակույթի ավելի խոր ընկալմանը, օտար լեզվով այն ներկայացնելու կարողությանը, դպրոցականներին տարբեր մշակույթների

երկխոսության մեջ ընդգրկելու:

Հիմնական դպրոցի դասընթացը նախատեսում է ծանոթացնել աշակերտներին լեզվակիր երկրների մշակույթի, հաղորդակից դարձնել, ինչպես նաև ապահովել սովորողի բազմակողմանի զարգացումը և սեփական ազգային մշակույթի առավել հստակ գիտակցումը:

Հիմնական մակարդակը պետք է հիմք դառնա ավագ դպրոցում օտար լեզվի հետագա ուսումնասիրության համար, որը յուրացնելուց հետո է միայն հնարավոր առաջ գնալ՝ կատարելագործելով լեզուների իմացությունը:

Այստեղ առանձնապես կարևորվում է ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները գործնականում, առօրյա կյանքում կիրառելու հնարավորությունների ստեղծումը՝ հետևյալ նպատակներով.

- շփման տարբեր իրադրություններում (այդ թվում նաև մասնագիտական) արդյունավետ հաղորդակցություն,
- միջմշակութային շփման ժամանակ բարեկիրթ հաղորդակցության նորմերի պահպանում,
- նոր տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական նպատակներով կիրառելու հնարավորությունների ընդլայնում,
- աշխատանքի տեղավորման և հետագա ուսման հնարավորությունների ընդլայնում,
- մասնագիտական ինտերնետ-համաժողովներին, միջմշակութային նախագծերին, մրցույթներին և օլիմպիադաներին մասնակցություն,
- համաշխարհային մշակույթում մայրենի և օտար լեզուների տեղի և դերի գիտակցում:[5]

[5] Օտար լեզուները Հայաստանում, գիտամեթոդական հանդես 4-5, 2009,էջ 20:

ԳԼՈՒԽ 3 ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՏԱՐՐ

ՈՒսումնառության դարերից ի վեր նման է եղել գիտելիքի մի յուրահատուկ շտեմարանի, որտեղ մարդն անոթի նման անդադար լցվում էր տեսական գիտելիքներով, իսկ հաջողվածները <<քայլող հանրագիտարան>> պիտակն էին կրում: Լեզուների ուսումնասիրությունը հիմնականում միտված էր մի նպատակի՝ բնագրով կարդալ և հասկանալ որևէ գրական կամ գիտական ստեղծագործություն: Պատմությունից մեզ հայտնի են նման շատ օրինակներ, երբ կարճ ժամկետում մարդը սովորում է որևէ օտար լեզու, որպեսզի ճիշտ հասկանա այն, ինչ հեղինակն է նախատեսել: Լեզվի այսպիսի պասիվ տիրապետումը մեր օրերում այլևս բավարար չէ: Մարդկանց փոխադարձ շփումը մեծացել է, և այդ պատճառով օտար լեզուների ստանձնած հաղորդակցական դերը ավելի է կարևորվել: Շատ լեզուների տիրապետելը, իհարկե, գրավիչ է և խոստունալից,սակայն քչերը կարող են համապատասխան ընդունակություններով օժտված լինել:[6]

Ժամանակի հրամայականն է որ այս համակարգչային դարում, կրթված մարդը փոքր թե մեծ, լինի տարբեր ունակություններով զինված, այդ տվում լեզվական ունակություններով և հմտություններով:Նա այնպիսի <<կոմպետենցիաների>> պետք է տիրապետի, որոնց միջոցով կարողանան ինքնուրույն կերպով գիտելիք ստանալ: Մարդու մոտ այսպիսի <<կոմպետենցիաներ>> ձևավորվում են միայն այն դեպքում, երբ նա որևէ գիտելիք ձեռք է բերում <<իր միջով>> անցկացնելու ճանապարհով միայն: Օրինակ, երբ աշակերտը սկսում է փորձեր կատարել, նա ինքնուրույն կերպով գիտելիք է ստանում, կատարում է փոքրիկ բացահայտություններ և հայտնագործություններ և դրանց միջոցով հանգում եզրակացությունների: Նա նյութն իր միջով անցկացնելով՝ յուրացնում և մարսում է այն, միաժամանակ ստանում աշխատանքային գործունեության ծավալման համար անհրաժեշտ լրացուցիչ կարողություններ և հմտություններ: Այս հմտություններն ու

[6] Օտար լեզուները Հայաստանում, գիտամեթոդական հանդես 4, 2013, էջ 58

կարողությունները պահպանվում են ամբողջ կյանքի ընթացքում:

Որևէ օտար լեզվի ուսումնասիրման արդյունավետությունը խորապես կախված է գործնական առաջադրանքների և բազմազան վարժությունների կատարումից: ՈՒսուցման համագործակցային կամ ինտերակտիվ մեթոդները ուսուցչին ընձեռում են ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու ավելի լայն հնարավորություններ: Այստեղ կարևորվում է ուսուցչի ուղղորդիչ դերը: Նա ընտրում է նյութին համապատասխան որևէ նոր և ճիշտ մեթոդ, մոտիվացնում կամ շահագրգռում է աշակերտին՝ ներքաշելով նրան աշխատանքային ակտիվ գործունեության մեջ: Ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ ուսուցիչը հնարավորություն է ստանում հասնել գերազանց արդյունքների: Քանի որ այս մեթոդներն իրենց մեջ ներառում են խմբային աշխատանքների կատարում, և դասարանում փոքր խմբերի բաժանվելը հնարավորություն է ընձեռում թե՛ թույլ, թե՛ ուժեղ աշակերտին ցուցաբերել ինքնուրույնություն և իր մասնակցությամբ ազդել դասի ընթացքի վրա:Աշակերտները դառնում են և՛ մասնակից և՛ կատարող, առաջ է գալիս միմյանց հետ շփման անհրաժեշտություն:Հատկապես օտար լեզուներ ուսումնասիրելիս սա շատ կարևոր գործոն է քանի որ նյութը շատ ավելի լավ է մտապահվում, իսկ աշակերտն ինքնուրույն աշխատելով՝ լրացուցիչ ընդհունակություններ ձեռք բերում, վարժվում է գիտելիք ստանալու այս եղանակին և ապագայում էլ նրա համար բարդություն չի ներկայացնում իրեն հուզող հարցերի մեջ խորամուխ լինելը և դրանց պատասխաններն ինքնուրույն կերպով գտնելը: Համոզված էր կերպով կարելի է ասել, որ ցանկացած ուսուցիչ գիտի այս բոլորը և տիրապետում է մոտիվացիայի տարբեր ձևերի առանց որոնց անհնար է հաջողության հասնել, քանի որ երեխան դժվար թե մեծ ջանքեր գործադրի ուսումնառության նպատակով, հատկապես՝մեր օրորում:Ինտերակտիվ մեթոդներ մոտիվացնելու լավ միջոց են, քանի որ ներամփոփում են մեծ հետաքրքրություն:

Մեր շրջապատում ամեն ինչ փոխվում և զարգանում է անընդմեջ: Եթե ուսուցիչը չփոխվի ուրեմն նա այլևս ասելիք չունի: Աշակերտները շատ են սիրում նորություններ, շատ արագ ոգևորվում են թարմության շունչը զգալիս :Տվեք նրանց Ձեզ նորովի տեսնելու և նորովի տեսնելու և նորովի ընկալելու հնարաորություն: Ապահովելու եք որակյալ ուսուցում աշակերտի համար, իսկ արդյունքը՝ աշակերտի կըրթվածության մակարդակը շատ ավելի բարձր է լինելու: Փորձեք մեկ անգամ և հետո այն ձեզ համար կդառնա պահանջ: Անկախ այն բանից, թե սովորողն ինչ ասպարեզ է ընտրելու ապագայում իր հետագա գործունեության համար, այս եղանակով մեր կրթված, գիտակ, փոքրիկ մարդը ամենայն հավանականությամբ հաձողության հասնելու մեծ հնարաորություն կունենա: Դեպի մեծ ճանապարհ

տանող այս պոքրիկ արահետները կերտում են նաև ստեղծագործ մարդուն, որն էլ, կարծում եմ, որևէ ուսումնառության վերջնական նպատակն է:

Մոտիվացման տեսակետ

Աշխատանքի մեջ քիչ թվով մարդիկ չունեն մոտիվացիայի կարիք: Մեծ մասամբ մարդիկ ունեն շահագրգռման կարիք, և դա բնական է, քանիոր մարդ միշտ ունենում է որևէ բան ստանալու ակնկալիք՝ ի պատասխան իր կատարած աշխատանքի կամ արարքի: Սա շատ նուրբ թեմա է, կախված այն բանից, թե որն է առաջնայինը՝մոտիվացիան, թե՞ ստանալիքը: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր եզրակացությունների կարելի է հանգել: Նախ քննարկենք, թե իմ կարծիքով, որ գործոններն են մոտիվացիա ապահովում:

Առաջին գործոն - հմայք, թովչանք կամ կախարդանք՝ ահա մարդկային բնույթին բնորոշ մի եղանակ՝ մոտիվացման համար:ՈՒսուցչի կամ ծնողի սեփական անձի օրինակները շատ հարմար են, եթե այդպիսիք կան:

Որպես երկրորդ գորխոն հանդես է գալիս նյութի հետաքրքիր լինելը, երբ երեխան աշխատում է ձգտումով՝ հուզիչ մտավոր զգացում ապրելու ցանկությամբ, որի դրդիչ ուժը հետաքրքրությունն է:

Երրորդ, իսկական և շատ կարեոր գործոն կարող է հանդես գալ նաև նյութի ստեղծագործական լինելու հատկությունը, հատկապես այն մարդկանց հետ աշխատելիս, երենք ունեն վերլուծական մտածողություն:

Սակայն, իհարկե, սխալ չէ նաև երեխային խոստանալ որևէ նյութական բան՝ ի պատասխան նրա կատարելիք աշխատանքի:Սա կարող է որոշ առումով վտանգաոր կամ վնասաբեր լինել այն դեպքում միայն, երբ փող են խոստանում: Այն իր մեջ կաշառակերություն զարգացնող սաղմեր է պարունակում: Եթե մարդը փող է սիրում և դառնում, թե ինչպես մենք ինքներս պարարտ հող ենք նախապատրաստում և պատասխանատու ենք դառնում ապագա կաշառակեր անձնավորություն կամ բարձրաստիճան պաշտոնյաներ դաստիրակելու կամ նախապատրաստելու համար: Խոսքս առավել չափով վերաբերում է ծնողներին, քանի որ սա դյուրին ճանապարհ է իրենց երեխաներին ստիպելու դաս սովորել:

Մոտիվացնելով երեխային չի կարելի մոռանալ, որ նա մեր օգնության կարիքն ունի: Հատկապես դեռահասության շրջանում՝ նրան հարկաոր է առանձնահատուկ օգնություն և ուշադրություն հատկացնել: Երեխայի նկատմամբ, ընդունված է ենթադրել, որ հատկապես նրբանկատ վերաբերմունք պետք է ցուցաբերի մայրը: Սակայն դա կարող է բավարար չլինել: Երեխայի մյուս հարազատները նույնպես կարևոր դեր են կատարում: Արժեքային դրական հատկանիշներ ձևավորելիս,

երեխաներին հետևողական վերաբերմունք է անհրաժեշտ: Իսկ ինչպե՞ս: Օրինակ՝ ուսուցիչ - ծնող համագործակցության միջոցով կարելի է վեր հանել որևէ աշակերտի թույլ և ուժեղ կողմերը, և պետք չէ նրան նախատել և քարկոծել բնավորության բացասական գծերի համար, այլ՝ հակառակը: Բացահայտելով նրա ուժեղ կողմը կամ բնավորության դրական գծերը, դրանք պետք է ընդունել որպես ելման կետ և ուղղորդել երեխային դեպի ինքնաբացահայտում, իսկ հետագայում նաև ինքնահաստատում: Երբ երեխան մեծահասակի կողմից անկեղծություն և հոգատարություն ստանա, նա ոչ թե կհակառակվի մեծահասակների ասածներին, այլ ընդհակառակը՝ չի հակաճառի, և մեծի խոսքը տեղ կհասնի: Այդ ժամանակ, շահելով եեխայի վստահությունը, ուսուցիչն ի զորու կլինի, հենվելով բնավորության ուժեղ կողմի վրա, վերացնել թույլ և / կամ բացասական գծերը և արատաոր երևույթները:ՈՒսուցչի այս ուղղորդիչ դերին հատկացվում է գերագույն տեղ ուսուցման ըընթացքում, քանի որ չկա ուսուցում առանց դաստիրակության:

Վերադառնալով մեր բուն թեմային, որպես չորրորդ գործոն մեծ դեր է կատարում նյութի արդիական կամ ժամանակակից լինելը: Այս իմաստով մրցակից չունեն համակարգչով աշխատելու հանձնարարությունները: Գաղտնիք չէ, որ բոլորն էլ հնարավորություն ունեն ցանկացած չափի և որակի տեղեկատվություն քաղելու ինտերնատային կայքերից: Քանի որ նոր սերնդի մեր փոքր ներկայացուցիչները շատ արագ և հեշտ են տիրապետում նորագույն տեխնոլոգիաների սարքերով աշխատելու եղանակներին, ապա ակնհայտ է, թե ինֆորմացիայի որքան առատ պաշար կարող են ձեռք բերել նրանք: Հաճախ տեղեկությունը լինում է նրանց տարիքին ոչ հարմար կամ ուշադրությունը շեղող, շատ դեպքերում էլ վնասակար՝ եթե տեղին և ճիշտ չի գործածվում այն: ՈՒնենալով այսպիսի մրցակից՝ ուսուցչի դերը բոլորովին էլ չի նսեմանում: Մի՞թե թատրոնը վերացավ, երբ ի հայտ եկավ կինոն:

Այստեղ էլ ուսուցիչը պետք է նորից օգնի աշակերտին, նա ունի բիոդաշտ, ինչը չունի համակարգիչը: Համակարգչի հետ աշխատելիս նախատեսվում է, որ երեխային ամպայման բացատրվի, որ բացի օգուտից համակարգիչն ունի նաև ուղղակի և անուղղակի վնասակար ազդեցություններ: Օրինակ՝ աչքերի լարվածություն կամ ինտերնատային ծրագրերով տարվելու վնասակար այլ հետեվանքներ, օրինակ ժամանակի ավելորդ վատնում: Դրանք կարող են շեղել և թույլ չտալ նրան կենտրոնանալու իր բուն աշխատանքների վրա: Այս ամենը երեխային բացատրելուց հետո միայն տալ համակարգչով աշխատելու այնպիսի հանձնարարություն, որի կարևոր կետերը նա՝ աշակերտը ի վիճակի կլինի վերարտադրել, կամ պատասխանել նախապես տրված մեկ կամ երկու հարցերի: Աշակերտը չպետք է արտատպի տեղեկություն որևէ կայքից, բերի դասարան և հանձնելո՝ ստանա գնահատական: Այս առումով տեղին է հիշել Սուխոմլինսկում, ով ուսուցչին խորհուրդներ տալիս մասնավորապես նկատում է, որ աշակերտին անհրաժեշտ է սովորեցնել աստիճանաբար, որպեսզի չանհետանա նրա հարցասիրությունը:

<<պատուհան բացեք և ոչ թե լայն դուռ դեպի գիտելիքը: Չի կարելի խճողել երեխային բազմատիվ փաստերով, քանի որ բթանում է զգայունությունը, և այլևս չես կարող երեխային հետաքրքրել>>: Թող նա կարողանա ընտրություն կատարել, կարևորը զանազանել երկրորդականից: Իսկ թե որքան և երբ սովորեցնոլ՝ որոշումը կայացնում է ուսուցիչը: ՈՒսուցիչն է որ պետք է ուղղորդի թե՛ դպրոցում և թե՛ տանը, կամաց-կամաց ավելացնելով աշակերտի ծանրաբեռնվածությունը՝ նման այն ծանրորդին, որը նպատակ ունենալով մեծ ծանրություն բարձրացնել՝ նախ սկսում է փոքր կշիռներից:

Սկսելով առաջին քայլից և ավելի ամրանալով, սովորողը ի վիճակի է լինում հաստատուն քայլերով առաջ գնալու: Չէ որ, վեջիվերջո, հոգեբանորեն և գործնականորեն նախապատրաստելով երեխային, մենք նրան մղում ենք ինքնուրույնության: Դա է մեր հիմնական նպատակը:Նա ազատ է առավելագույն ինքնաարտահայտման համար՝ թե ՛ կյանքում և թե ՛ աշխատանքում: Թե որքանով է մեզ հաջողվում իրականացնել կամ կյանքի կոչել մեր երազանքներն ու սպասելիքները, ցույց է տալու կյանքը՝ շատ-շատ տարիներ հետո: ԵՎ դու, ուսուցիչ, մեկ անգամ ևս գոհունակությամբ համոզվելու ես, որ այս աշխարհում ոչինչ անհետ չի կորչում, և ամեն ինչ պատահում է անհրաժեշտաբար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հետազոտության արդյունքները հանգում ենք այն եզրակացությանը, որ օտար լեզվի ուսուցման արժեհամակարգում կարևորագույն խնդիրներ կարող են համարվել

- բանավոր խոսքի զարգացում,
- արդյունավետ հաղորդակցության կարողությունների և հմտությունների զարգացումը,
- գրավոր խոսքի զարգացում,
- արդյունավետ ընթերցանության կարողությունների ու հմտությունների զարգացումը, ճկուն լեզվամտածողության զարգացումը և այլն:

Այստեղ ղառանձնապես կարևորվում է ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները գործնականում, առօրյա կյանքում կիրառելու հնարավորությունների ստեղծումը՝ հետևյալ նպատակներով.

- շփման տարբեր իրադրություններում (այդ թվում նաև մասնագիտական) արդյունավետ հաղորդակցություն,
- միջմշակութային շփման ժամանակ բարեկիրթ հաղորդակցության նորմերի պահպանում,
- նոր տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական նպատակներով կիրառելու հնարավորությունների ընդլայնում,
- աշխատանքի տեղավորման և հետագա ուսմահնարավորությունների ընդլայնում,
- մասնագիտական ինտերնետ-համաժողովներին, միջմշակութային նախագծերին, մրցույթներին և օլիմպիադաներին մասնակցություն,
- Համաշխարհային մշակույթում մայրենի և օտար լեզուների տեղի և դերի գիտակցում:

Սույն աշխատության մեջ օտագործված մեթոդներն ու մոտեցումները կնպաստեն օտար լեզվով սովորողների շրջանում արժեհամակարգի ձևավորմանը:

Այսպիսով, օտար լեզվի կրթության բովանդակությունն ապահովում է.

- սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և

կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան,

- սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը,
- ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը,
- հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գերմաներեն ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու Երևան 2008:
2. Օտար լեզուները Հայաստանում, գիտամեթոդական հանդես 4, 2009
3. Գերմաներեն լեզու, հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան 2007:
4. Օտար լեզուները Հայաստանում, գիտամեթոդական հանդես 5, 2009:
5. Օտար լեզուները Հայաստանում, գիտամեթոդական հանդես 4, 2013:
6. Օտար լեզուները Հայաստանում, գիտամեթոդական հանդես 2, 2015: